ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ (ԴՊՐՈՑԻ) ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՒՂԵՑՈՒՅՑ ԴՊՐՈՑԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՀԱՄԱՐ

Տարածաշրջանային զարգացման կենտրոն
Թրանսփարենսի Ինթերնեշնլ-Հայաստան

Oxfam
Օքսֆամ ՄԲ Հայաստան

n(o)vib
OXFAM NETHERLANDS
Օքսֆամ Նիդեռլանդներ

Երևան-2007

«ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ (ԴՊՐՈՑԻ) ԽՈՐՀՈՒՐԴ»

ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԴՊՐՈՑԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՀԱՄԱՐ

ԱՍՈՂԻԿ

«Ասողիկ» հրատարակչություն
Երևան 2007

ՀՏԴ 37.1
ԳՄԴ 74.24
Հ 247

Հ 247 «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ (ԴՊՐՈՑԻ) ԽՈՐՀՈՒՐԴ» ՈՒՂԵՑՈՒՅՑ ԴՊՐՈՑԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄԻ ՀԱՄԱՐ.-Եր.: Ասողիկ, 2007. 68 էջ:

Գրքույկում ներկայացված են ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության (դպրոցի) խորհրդի ստեղծման և զարգացման կարևոր փուլերը: Համապատասխան իրավական ակտերի համեմատական վերլուծության միջոցով վեր են հանված այն կարևոր դրական փոփոխությունները, որոնք տեղ են գտել դպրոցի գործադիր տնօրենի և խորհրդի ընտրությունների նոր կարգերում, ինչպես նաև այդ կարգերով սահմանված խորհրդի կարևոր լիազորությունները:
Հարց ու պատասխանի ձևաչափի միջոցով պարզաբանված են դպրոցի խորհրդի ընտրությունների ու գործունեությանը և տնօրենի ընտրություններին վերաբերող բազմաթիվ հարցեր:
Գրքույկի հավելվածներում բերված են այն կարևոր նորմատիվ իրավական ակտերը, որոնք կարգավորում են խորհուրդների գործունեության տարբեր ասպեկտները, ինչպես նաև դպրոցի գործադիր տնօրենի հավակնորդի խորհրդի նախագահին ուղղված դիմումի ձևը:

Գրքույկը երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի կողմից որպես մեթոդական ձեռնարկ դպրոցի խորհրդի անդամի համար:

Հ $\frac{4306000000}{0136(01)\ 07}$ 2007թ. ԳՄԴ 74.24

© Օքսֆամ ՄԲ Հայաստանյան գրասենյակ, 2007
© Տարածաշրջանային զարգացման կենտրոն / Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հայաստան, 2007

ISBN 978-9939-50-012-6

Ձեռնարկի հեղինակ. «Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հայաստան» հասարակական կազմակերպության կրթական ծրագրերի աշխատանքային խումբ:

Խորհրդատու. ՀՀ կրթության և գիտության նախարարության գլխավոր մասնագետ Սամվել Պեպանյան:

Ձեռնարկի պատրաստումը և տպագրությունը իրականացվել է

Օքսֆամ Մեծ Բրիտանիա բարեգործական հիմնադրամի և

Օքսֆամ Նովիբ հիմնադրամի

«ԱՀՌՇ մոնիտորինգ և գնահատում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի Ինթերնեշնլ Հայաստանն իր հատուկ շնորհակալությունն է հայտնում ՀՀ կրթության և գիտության նախարարությանը և Կրթության ազգային ինստիտուտին՝ ձեռնարկը գրախոսելու և կարևոր դիտողություններ և առաջարկություններ անելու համար:

Խորհուրդը որպես հանրակրթական ուսումնական հաստատության կառավարման մարմին

Տասնամյակներ ԽՍՀՄ-ում հանրակրթական հաստատությունները կառավարվում էին կենտրոնացված կարծր համակարգով: Դպրոցի նպատակն էր կերտել կոմունիստական ապագան կառուցող քաղաքացուն՝ զինված գիտելիքներով, գիտակցված մասնագիտական կողմնորոշմամբ, պատրաստ իր կյանքը զոհաբերելու սոցիալիստական հայրենիքին:

Նորանկախ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ անհրաժեշտ էր նոր դպրոց՝ կրթական ժառանգության խելամիտ տնօրինմամբ: Հայաստանի Հանրապետությունը որդեգրեց կառավարման համակարգի ժողովրդավարական սկզբունքները, միջազգային փորձը և սկսեց արմատական փոփոխություններ կատարել ողջ կրթական համակարգում (նախադպրոցական կրթությունից մինչև բուհական և հետբուհական կրթություն):

Հանրակրթական հաստատությունների մեկ տողով ֆինանսավորման և կառավարման ապակենտրոնացման համալիր ծրագրերի մշակումը և քայլ առ քայլ կիրառումը ՀՀ կառավարությունը սկսեց իրականացնել 90-ականների երկրորդ կեսից: Հաստատությունների կառավարման փորձնական ծրագրի շրջանակներում ձևավորվեց քառաթև համակարգ (հիմնադիր + լիազորված մարմին և համայնք + գործադիր տնօրեն + խորհուրդ) նոր բաղադրիչներ էին խորհուրդը և համայնքները: Նրանց դերի մեծացման գաղափարը պետք է համադրեր բոլոր կողմերի շահերը հաստատության կառավարման բարդ գործում, հեռու լիներ միաբևեռ կառավարչական ճնշումից:

1996-97 թվականից սկսված փորձնական ծրագիրը 1999-ի մարտին ընդարձակվեց ընդգրկելով ևս ավելի քան 150 մարզային և համայնքային հանրակրթական դպրոցներ: ՀՀ ԿԳ նախարարի հրամանով ընդունվեցին խորհուրդների և տնօրենների ընտրության կարգերը (22.03.99թ. N91-Մ և 93-Մ): 2001 թվականի նոյեմբերին ընդունվեց ՊՈԱԿ-ների մասին ՀՀ օրենքը, որի հիման վրա հիմնովին փոփոխվեց հանրա-կրթական հաստատությունների օրինակելի կանոնադրությունը (2002 թ. հուլիսի 25-ի N1392-Ն որոշում):

Քանի որ մոտ 300 համայնքային և 1000-ից ավելի մարզային ենթակայության հաստատությունների կառավարման, կանոնադրական գործունեության վերահսկման, տնօրենի ընտրության գործառույթներում առաջացել էին անհամապատասխանություններ, ՀՀ կառավարությունը 2002 թվականի դեկտեմբերի 5-ի 2095-Ն որոշմամբ համայնքների կառավարմանը հանձնված հաստատությունների կառավարման լիազորությունները վերապահեց մարզպետներին (Երևանի քաղաքապետին): Մարզպետները դիտորդի կամ խորհրդատուի կարգավիճակից դուրս եկան և ստանձնեցին կառավարչական լիազորություններ:

ՀՀ գրեթե բոլոր հանրակրթական հատատությունների կառավարումը բերվեց միասնական իրավական դաշտ (մոտ 1400 դպրոց):

ՀՀ ԿԳ նախարարի 2000 թվականի դեկտեմբերի 22-ի 420-Մ և 421-Մ հրամաններով ընդունվեցին տնօրենի և խորհրդի ընտրության նոր կարգերը, ինչպես նաև 419-Մ հրամանով՝ խորհրդի կանոնադրությունը:

2005թ. հունվարի 25-ի N224-Ն որոշմամբ ՀՀ կառավարության կողմից սահմանվեցին ՊՈԱԿ-ների տնօրենների ընտրության հիմնական չափանիշները: 2006 թվականի դեկ-

տեմբերի 8-ի ՀՀ ԿԳ նախարարի 980-Ն և 981-Ն հրամաններով ընդունվեցին խորհրդի և տնօրենի ընտրության նոր՝ երրորդ սերնդի, լրամշակված կարգերը, որոնք 2007 թվականի հունվարի 31-ին գրանցվեցին ՀՀ արդարադատության նախարարությունում:

Ինչպես ցանկացած երկրում, այնպես էլ Հայաստանում, թե կառավարող վերնախավը, թե մանկավարժը, ծնողը և համայնքը, սկզբունքորեն պատրաստ չէին կառավարման նոր համակարգին: Առաջինը՝ որպես կառավարումը զիջող, իսկ երկրորդը՝ որպես այն ստացող: Փաստացի կառավարման հետ ոչ մի առնչություն չունեցող կառավարիչները՝ ծնող, մանկավարժ, ինչպես նաև լիազոր մարմնի ներկայացուցիչները, սկուտեղի վրա մատուցված իշխանությունը, չգիտեին ինչպե՞ս օգտագործեն իրենց լիազորություններն ի շահ հաստատության առանց մարզպետի կամ տնօրենի հավանության: Ուստի իրենց քայլերի արդյունավետությունը դիտարկում էին նեղ, անձնավորված չափանիշներով և սկզբունքներով:

Մարզերում ծնողների և մանկավարժների շրջանում կատարված բազմաթիվ հարցումները, հանդիպումները խորհրդի անդամների հետ տվել են տխուր պատկեր: Ծնողները չգիտեն, որ դպրոցում կա խորհուրդ, շփոթում են մանկավարժական խորհրդի հետ կամ, եթե գիտեն որ կա, չգիտեն թե այն, բացի տնօրեն ընտրելուց, էլ ի՞նչ լիազորություններ ունի: Եղել են դեպքեր, որ նույնիսկ մանկավարժները չեն կարողացել նշել իրենց դպրոցի խորհրդի ոչ մանկավարժ անդամներից մեկ-երկուսին: Դրա պատճառը խորհրդի անդամների հաճախակի փոփոխումներն էին, համատեղ վերապատրաստումների և համատեղ աշխատանքի բացակայությունը:

Շատ հաճախ լսում ես. «տնօրենին վերևից նշանակե՛ք ու վե՛րջ» կամ «գյուղում մեզ մի գցեք կռվի մեջ», «միևնույն է

մեզ լսող չկա» կամ «գրել կարդալ չիմացողից ի՞նչ դպրոց կառավարող կամ տնօրեն», «մարզպետը ոնց կասի այդպես էլ կլինի», «մեզանից ի՞նչ բյուջե հաստատող» և նմանատիպ այլ արտահայտություններ:

Եթե տնօրեն «ընտրելիս» ընդհանուր հայտարարի եկած խորհրդի անդամները հավաքվում էին, ապա այլ կառավարչական գործերին նրանց հավաքելը գրեթե հնարավոր չէր: Կազմվում էին ձևական արձանագրություններ, վավերացվում էին տնօրենի կողմից կազմված փաստաթղթերը՝ հաճախ ոչ ճիշտ հաշվարկներով:

1998-99, 2000 և 2007 թվականների խորհրդի և տնօրենի ընտրության կարգերի համեմատական վերլուծությունը հստակ բացահայտում է կառավարման խորհրդի հիմնական պրոբլեմները, դրանց լուծման ուղիները, նախկինում կատարված բացթողումները և անհաղթահարելի թերությունները, որոնք կարող են լուծվել միայն բանական մարդու գիտակցական մակարդակում և ոչ մի կատարյալ կարգ չի կարող ստիպել մարդուն լինել արդար, չլինել կողմնակալ, կամ ձայն չվաճառել:

Նշենք գործադիր տնօրենի և խորհրդի ընտրությունների նոր կարգերի մի քանի էական առավելությունները նախորդ կարգերի համեմատությամբ.

հարցադրում	1998-99	2000	2007
դպրոցի խորհրդում մանկավարժական և ծնողական խորհուրդների թեկնածուների առաջադրումը	առաջադրումը կատարվում էր կամ բաց կամ գաղտնի	առաջադրումը գաղտնի էր, միայն ծնողական խորհրդի նախագահներից և հաստատության մանկավարժներից, խորհրդի անդամների քանակը և առաջադրման հարաբերությունը կախված էին աշակերտների թվից) 2+1+2, 2+2+3 և 3+2+4):	առաջադրումը գաղտնի է մանկավարժների համար առնըվազն 3 տարվա տվյալ դպրոցում աշխատանքի ստաժի պայմանով, ծնողների համար սովորող երեխայի առկայությունը պարտադիր է: Բոլոր խորհուրդների համար սահմանվեց մեկ թիվ (2մ+1հ+2ծ+2ու)

վերադասի կողմից առաջադ-րում	կարող էր առաջադրել ցանկացած անձի	առաջադրումը պետք է հաստատ-վեր մարզխորհրդի, ավագանու կամ նախարարության կոլեգիայի կողմից: Երևանի թաղապե-տերը խորհրդի անդամների առա-ջադրման իրա-վունք ստացան, իսկ մարզային հա-մայնքները՝ ոչ: Հատկապես մար-զերում մարզպետի հավատարիմ ան-ձանց «բանակը» միաժամանակ ընդգրկվում էր մի քանի խորհուրդնե-րում	Ներկայացուցիչ առաջադրելու իրավունք է ստացել նաև հա-մայնքը և ավա-գանին (Երևա-նում 2 ձայն, մարզերում՝ 1), սահմանվեց կրթական ցենզ (միջին մասնա-գիտական կամ բարձրագույն կրթություն): Մեկ անձը կարող էր ընդգրկվել միայն մեկ խորհրդի կազմում
ՀՀ ԿԳ նա-խարարութ-յան ներկա-յացուցիչ (փորձա-գետ)	մասնակցութ-յունը հայեցո-ղական էր և չուներ ոչ մի լիազորություն	փորձագետի մաս-նակցությունը պարտադիր էր, նրան հրավիրում էր հաստատության խորհուրդը կամ մարզային կրթութ-յան վարչությունը, փորձագետի եզրա-կացությունը	ՀՀ ԿԳ նախա-րարության ներկայացուց-չին, խորհրդի կողմից տեղե-կացվելուց հետո, հրավիրում է լիազոր մարմի-նը: Ներկայա-ցուցիչը բուն

		խորհրդակցական բնույթի էր	մրցույթի համար խորհրդի հետ միասին կրում է հավասար պատասխանատվություն, ստուգում է թեստային աշխատանքը, տալիս է եզրակացություն մրցույթի գործող կարգի և օրենսդրության պահանջներին համապատասխանության մասին, ապահովում է մրցույթի բանավոր փուլը և գաղտնի քվեարկությունը
հավակնորդի մասնակցության իրավունք	հայերենի իմացություն, բարձրագույն կրթություն, 3 տարվա մանկավարժական աշխատանքի փորձ	հայերենի իմացություն, բարձրագույն մասնագիտական կրթություն, իսկ համապատասխան հավակնորդ չլինելու դեպքում կարող էր գրանցվել նաև ոչ մասնագիտական կրթությամբ հա-	ՀՀ քաղաքացիություն, բարձրագույն կրթություն, վերջին 10 տարվա ընթացքում 5 տարվա մանկավարժական ստաժ կամ 3 տարվա կրթության կառավարման

		վակնորդը: 2002 թ.-ից ՊՈԱԿ-ի մասին օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, պարտադիր էր միայն բարձրագույն կրթությունը և 3 տարվա մանկավարժական աշխատանքային ստաժը:	ոլորտի աշխատանքի ստաժ
հավակնորդի գիտելիքները	պարտադիր չափանիշների ստուգման որևէ մեխանիզմ կամ ընթացակարգ սահմանված չէր, բավական էր անդամների կեսից ավելիի կողմ քվեարկելը:	պարտադիր չափանիշների ստուգման մեխանիզմը լիովին չհստակեցվեց և տրված եզրակացությունն ուներ միայն խորհրդակցական բնույթ, իմացության շեմ սահմանված չէր	գիտելիքների ստուգման թեստային համակարգի կիրարկում, իմացության 80%-ի շեմ, օտար լեզվի իմացություն և համակարգչով աշխատելու ունակություն, պարտադիր բանավոր փուլ: Այս պահանջներին հավակնորդների համապատասխանության ստուգումը դրվեց խորհրդի և ԿԳՆ

			ներկայացուցչի վրա:
ընտրության անցկացում և արդյունքներ	Խախտումների բնույթի (էական կամ ոչ էական) որոշման հստակ ընթացակարգ չկար: Պայմանագրի կնքում տասնօրյա ժամկետում, Լիազոր մարմնին բողոքելու ժամկետ սահմանված չէր (միայն դատական և վերադասության կարգով):	Խախտումների էական կամ ոչ էական լինելու մասին ձևակերպումը հանվեց: Խախտումները արձանագրում և գնահատում էր փորձագետը նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովը կամ դատարանը՝ առաջնորդվելով կարգի և այլ իրավական ակտերի պահանջներով: Պայմանագրի կնքում տասնօրյա ժամկետում, սակայն նախատեսվեց լիազոր մարմնին բողոքարկման ռեալ ժամկետ (յոթ օր/՝ ի լրումն դատական կարգի և նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովի:	Պայմանագրի կնքում տասնհինգօրյա ժամկետում: Նախատեսված է բողոքարկման տասնօրյա ժամկետի լրումն դատական կարգի և նախարարի հրամանով մրցույթի արդյունքները վերանայող եռաթև հանձնաժողովի: ՀՀ ԿԳՆ ներկայացուցչի բացասական եզրակացությունը հիմք է՝ կայացած ընտրությունը սահմանված կարգով վերանայելու համար:

հաստատության գործող տնօրենի և խորհրդի անդամի մրցույթին մասնակցության և վարչական ճնշումներից պաշտպանության հարցը	մասնակցության կամ խորհրդի կազմի փոփոխման որևէ արգելք կամ նախապայման չկար:	տնօրենի պաշտոնակատարին արգելվեց մասնակցությունը միայն կրկնակի մրցույթին, իսկ խորհրդի անդամի լիազորությունը որպես հավակնորդ գրանցվելիս կասեցվում էր: Խորհրդի անդամի ետկանչի համար պահանջվում էր խորհրդի համաձայնությունը, սակայն առաջադրողի նախաձեռնությամբ փոփոխում կարող էր կատարվել ցանկացած պահին:	Տնօրենի պաշտոնակատարը կարող է մասնակցել մրցույթին՝ մրցույթից առնվազն 20 օր առաջ աշխատանքից ազատվելու դեպքում, իսկ խորհրդի անդամի լիազորությունները կասեցվում են մրցույթին մասնակցելու դեպքում: Առաջադրողը, մրցույթ հայտարարելուց հետո, խորհրդի անդամին ետ կանչել չի կարող: Խորհրդի անդամը կարող է փոփոխվել միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:
եկամուտների և ծախսերի նախահաշ-	Նախահաշիվը սահմանված նորմատիվների հա-	Դպրոցին հասանելիք ֆինանսավորման սահմաններում տնօրենը հաշ-	Մնացել է անփոփոխ, սակայն անհրաժեշտ է հստակեցնել

վի մշակում և հաստատում	մապատասխան կազմում էր տնօրենը և հաստատում էր խորհուրդը: Կատարվում էին բազմաթիվ սխալներ, չհիմնավորված հաշվարկներ, որոնց ուղղումները պետական կառավարման ֆինանսական մարմինների համար շատ ծանր գործ էր:	վապահի հետ միասին կազմում էր ծախսերի նախահաշվի նախագիծը, որը քննարկում էր խորհուրդը: Միայն խորհրդի որոշումից հետո, նախահաշիվը ներկայացվում էր լիազորված մարմնի վավերացմանը:	տնօրենի, խորհրդի և լիազոր մարմնի գործառույթները հաստատության ֆինանսական կառավարման հարցերում:

Բացի վերը նշված էական փոփոխություններից, նոր կարգերով սահմանվել են ևս մի քանի այլ փոփոխություններ.

1. «դիմումների ընդունման վայրը չի կարող տվյալ բնակավայրից դուրս լինել»: Եղել են դեպքեր, երբ խորհրդի նախագահները չեն վստահել հավակնորդների գործերի ընդունումը խորհրդի անդամներին, բնակվել են մարզկենտրոններում և ստեղծել են անհարկի խոչընդոտներ մրցույթի հավակնորդների համար և այլն (կետ 4-ը),
2. մրցույթը՝ խորհրդի որոշմամբ, կարող է մեկ անգամ հետաձգվել 3 օրով, եթե հավակնորդի բացակայությունը,

ուշացումը կհամարվի հարգելի: Ոչ ոք երաշխավորված չէ հիվանդություններից, անսպասելի, բայց հաղթահարելի խոչընդոտներից, որոնք բնականաբար չպետք է խանգարեն հավակնորդին՝ ընտրությանը մասնակցելու իր իրավունքից օգտվելու հնարավորությունից,

3. ուղղակիորեն սահմանվեցին մի քանի պահանջներ՝ առողջապահության, իրավապահ և սոցիալական մարմինների հետ առնչությունների առումով (ՀՀ օրենսդրությամբ սահմանված), որոնց կատարումը պարտադիր է հավակնորդների համար (ընտրության կարգ կետ 3,7),
4. կրկնակի քվեարկության հնարավորությունը վերապահվեց միայն 1-ից ավելի ձայն հավաքած հավակնորդներին (ընտրության կարգ, կետ20):

Խորհրդի կարևոր լիազորությունները.

- (օրինակելի կանոնադրություն, կետ.48-ե) Խորհուրդը որոշում է հաստատության շահույթի, այն է՝ հաստատության Կանոնադրությամբ սահմանված ձեռնարկատիրական գործունեության արդյունքում, ինչպես նաև, նվիրատվությունների և այլ օրինական միջոցներով ստացված դրամական միջոցների տնօրինման հիմնական ուղղությունները:

Արտաբյուջետային գումարների տնօրինման հարցի վերաբերյալ որոշում ընդունելուց առաջ, խորհուրդը պետք է լսի տնօրենին, հաշվապահին, տնտեսվարին, կարող է հրավիրել մասնագետներ՝ ծախսային նախագծի վերաբերյալ բոլոր կարծիքներին, առաջարկություններին ծանոթանալու և որոշում կայացնելու նպատակով:

- (օրինակելի կանոնադրություն, կետ.48-զ) «Հաստատում է իր աշխատակարգը» շատ կարևոր դրույթ է, որը, սակայն, հանիրավի անտեսվում է դպրոցի խորհրդի կողմից, քա-

նի որ ստիպում է չաշխատող խորհրդի անդամին առաջնորդվել հաստատված ժամանակացույցով, կատարել բաշխված պարտականությունները, ներկայացնել հաշվետվություններ կատարված և կատարվելիք աշխատանքների մասին և այլն:

- (օրինակելի կանոնադրություն, կետ. 48-գ) «Տարեկան ծախսային նախահաշվի նախագծի քննարկում». տնօրենի ընտրությունից հետո, խորհրդի կարևորագույն գործառույթներից է: Տնօրենը՝ հաշվապահի կողմից կազմված նախագիծը եկամուտներ (պետական միջոցներ+արտաբյուջետային մուտքեր) և ծախսեր, ըստ տնտեսագիտական տողերի, եռամսյակների բաժանված, ներկայացնում է խորհրդի քննարկմանը: Յուրաքանչյուր ծախսային տող պետք է ունենա իր հիմնավորումը՝ հաշվարկային հիմքը, նպատակը:

Ցանկացած տողի վերաբերյալ կարող են կատարվել առաջարկություններ, որոնք նախագծի հեղինակների կողմից կարող են կա՛մ ընդունվել, կա՛մ հիմնավորված ձևով մերժվել:

- (օրինակելի կանոնադրություն, կետ. 48-գ) Հաստիքացուցակը աշխատավարձի ֆոնդի ձևավորման կարևոր մասն է, քանի որ դրանից է կախված ամենամեծ ծախսային հոդվածի ծավալը: Խորհուրդը պարտավոր է ուսումնասիրել ցանկը, հաստատության կանոնադրությունը, հաշվապահական և կադրային նորմատիվները: Միայն խորհրդի կողմից նախագծերի հավանությունից հետո դրանք տնօրենը ներկայացնում է լիազոր մարմնի հաստատմանը (օր. կան., կետ.37ժզ):

- Ցանկացած խորհուրդ, մեկ տարվա ընթացքում առնվազն 4 անգամ (եռամսյակային) պետք է հրավիրի նիստ և ընդունի տնօրենի հաշվետվությունները (ֆինանսատնտեսական, ինչպես նաև ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքի, դրանց կատարողականի և տարեկան ուսում-

նաղաստիարակչական ծրագրերին համապատասխանության մասին):

- Խորհրդի նիստերի օրակարգային հարցերի օրինակելի ցանկ (օրինակելի կանոնադրություն, կետ.48ա) Տնօրենի դրույքային աշխատավարձին, խորհրդի համապատասխան որոշմամբ, կարող է սահմանվել լրավճար: Նման որոշում ընդունելուց առաջ, խորհուրդը պետք է լսի հաստատության հաշվապահին, հստակ կարծիք ունենա դրամական միջոցների մասին, համոզված լինի, որ այդ դրամական միջոցները չեն ստացվել անօրինական տնտեսման արդյունքում (ուսուցիչների դրույքային չափաբաժնի պակասեցում, սահմանված լրավճարների՝ դասղեկություն, գրավորների ստուգում, կիսվող դասաժամեր, հաստատության լիարժեք սպասարկման կրճատում): Ֆինանսական միջոցների առկայության դեպքում, կարող են սահմանվել լրավճարներ հաստատության աշխատակազմի (մանկավարժ և սպասարկող անձնակազմ) համար: Այդ որոշումների հիման վրա, տնօրենը կազմած նախագիծը ներկայացնում է լիազորված մարմնի հաստատմանը: Վերջնական հավելավճարները գրանցվում են աշխատանքային պայմանագրերում:

- Հաստատության տնօրենը առաջնորդվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 218-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով «Երեխայի մասին» ՀՀ օրենքի 11-23-րդ հոդվածներով սահմանված իրավունքները, մշակում և խորհրդի քննարկմանն է ներկայացնում դպրոցի ներքին կարգապահական կանոնների նախագիծը: Այդ նախագծով կարող են կանոնակարգվել աշխատողների աշխատանքի ընդունման և ազատման կարգը, սովորողների համար՝ հատուկ հագուստ կրելու պարտավորություն, դպրոցական արարողակարգ, վարքագծի կանոններ և այլն:

- Բացի վերոգրյալ հարցերի քննարկումից, խորհուրդը իրավասու է քննարկել և կայացնել որոշումներ հաստատության կանոնադրական գործունեության հետ առնչվող այլ հարցերի վերաբերյալ (ծնողների, ուսուցիչների, սովորողների բողոքներ, առաջարկություններ, լիազորված մարմնի կողմից առաջարկված հարցեր և այլն):
- Պարտականությունների, ծրագրերի կատարման, առաջարկվող ծախսային փոփոխությունների անհրաժեշտությունները կարող են դառնալ օրակարգային հարց: Նման դեպքում հրավիրվում է արտահերթ նիստ:

ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ. ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

- **Ինչու՞ փոփոխվեց դպրոցական խորհուրդների անդամների թվաքանակը:**

ՀՀ բոլոր հանրակրթական ուսումնական հաստատությունների խորհուրդների համար սահմանվեց մեկ միասնական թվաքանակ, որպեսզի տարածքային կառավարման մարմինների ենթակայության տակ գտնվող դպրոցների խորհուրդներում ընդլայնվի տեղական ինքնակառավարման մարմինների և ծնողական համայնքի մասնակցությունը, ինչպես նաև ապահովվի առաջադրողների ներկայացուցչական հավասարակշռությունը:

- **Ինչպե՞ս են առաջադրվում մանկավարժական խորհրդի ներկայացուցիչները և ի՞նչ հիմքերով է դադարեցվում նրանց լիազորությունները:**

Հաստատության մանկավարժական խորհրդից (մինչև 40 ուսուցիչների դեպքում՝ մանկավարժական կոլեկտիվը գաղտնի քվեարկությամբ տվյալ հաստատությունում առնվազն 3 տարվա աշխատանքային ստաժ ունեցող ուսուցիչներից) գաղտնի քվեարկությամբ ընտրում է խորհրդի 2 անդամներին: Նրանց լիազորությունները դադարեցվում են աշխատանքից ազատվելու, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում:

- **Ինչպե՞ս են առաջադրվում ծնողական խորհրդի ներկայացուցիչները և ի՞նչ հիմքերով է դադարեցվում նրանց լիազորությունները:**

Հաստատության ծնողական խորհուրդը, գաղտնի քվեարկությամբ, որոշում է հաստատության խորհրդի 2 անդամներին: Ծնողական խորհրդի կողմից առաջադրված թեկնածուները պետք է ունենան տվյալ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխա: Ծնողական խորհրդի նախագահի թեկնածությունը պարտադիր չէ: Ծնողական խորհրդի կողմից խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հաստատության կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև տվյալ հաստատությունում այլևս սովորող երեխա չունենալու դեպքերում:

- **Ինչպե՞ս են առաջադրվում տարածքային (լիազորված մարմին) ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները և ի՞նչ հիմքերով է դադարեցվում նրանց լիազորությունները հաստատության խորհրդում:**

Տարածքային և տեղական ինքնակառվարման մարմինները խորհրդում ներկայացվում են 3 անդամներով: Հայաստանի Հանրապետության մարզերում 2 անդամ առաջադրում են մարզպետները և 1 անդամ համայնքի ղեկավարը՝ ավագանու համաձայնությամբ: Վերջինիս առաջադրումը նույնպես վերապահվում է մարզպետին, եթե համայնքի ղեկավարը նշված լիազորությունը 7-օրյա ժամկետում չի իրականացնում:
Երևան քաղաքում 1 անդամ առաջադրում է Երևանի քաղաքապետը և 2 անդամ թաղային համայնքի ղեկավարը՝ ավա-

գանու համաձայնությամբ: Վերջինիս առաջադրումը նույնպես վերապահվում է Երևանի քաղաքապետին, եթե թաղային համայնքի ղեկավարը նշված լիազորությունը 7-օրյա ժամկետում չի իրականացնում:
Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայության հաստատությունների խորհուրդներում նախարարը առաջադրում է 3 անդամ:
Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, և հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում:

- **Եթե խորհրդի նախագահը և (կամ) անդամը ցանկանում է (են) մասնակցել մրցույթին, որպես տնօրենի պաշտոնի հավակնորդ, ո՞վ է վարում այդ նիստը և նոր անդամ ընտրվու՞մ է (են):**

Խորհրդի նախագահի (անդամի) լիազորությունները՝ որպես խորհրդի նախագահի (անդամի), կասեցվում են: Խորհրդի որոշմամբ նախագահական պարտականությունները կատարում է խորհրդի անդամներից մեկը: Այդ ժամանակահատվածում խորհրդի նոր անդամ չի առաջադրվում և չի ընտրվում: Խորհրդի անդամը, պաշտոնում ընտրվելու դեպքում դադարեցնում է իր լիազորությունները և համապատասխան առաջադրողը 20-օրյա ժամկետում նոր անդամ է ներկայացնում լիազորված մարմնի հաստատմանը: Չընտրված անդամի կասեցված լիազորությունները վերականգնվում են:

- **Մանկավարժական և ծնողական խորհուրդների ներկայացուցիչները քանի՞ ձայն ունեն քվեարկության ժամանակ:**

Մանկավարժական և ծնողական խորհուրդների նիստերի մասնակից յուրաքանչյուր քվեարկող կարող է քվեարկել միայն առաջադրված թեկնածուներից մեկի օգտին:

- **Ո՞վ է վարում խորհրդի նիստը և ստորագրում խորհրդի որոշումները:**

Խորհրդի նիստը վարում է խորհրդի նախագահը, արձանագրում է ընտրված քարտուղարը: Նիստի արձանագրությունը վավերացվում է խորհրդի նախագահի կամ նախագահողի կողմից: Խորհրդի մյուս անդամների ստորագրությունը չի պահանջվում: (օրինակելի կանոնադրություն, կետ.51-գ)

- **Կա՞ արդյոք կրթական սահմանափակում հաստատության խորհրդի կազմում առաջադրվելու համար:**

Խորհրդի կազմում առաջադրվելու համար պարտադիր է ունենալ միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն:

- **Մեկ անձը կարո՞ղ է միաժամանակ ընդգրկված լինել տարբեր հանրակրթական հաստատությունների խորհուրդների կազմերում:**

Նույն անձը չի կարող ընդգրկվել մեկից ավելի խորհուրդների կազմերում, անկախ այն հանգամանքից թե ում կողմից է առաջադրվել:

- **Հաստատության տնօրենը կարո՞ղ է լինել խորհրդի անդամ:**

Իր դպրոցում՝ ոչ, այլ դպրոցում՝ այո:

- **Ո՞վ և ի՞նչ ժամկետում է հաստատում խորհրդի կազմը:**

Տարածքային կառավարման մարմինը (ըստ ենթակայության՝ մարզպետը, Երևանի քաղաքապետը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը), հիմք ընդունելով հաստատության մանկավարժական, ծնողական խորհուրդների որոշումները և համայնքի ղեկավարի առաջարկությունը, 7 օրվա ընթացքում հաստատում է խորհրդի անվանական կազմը, կամ սույն կարգի խախտմամբ առաջադրված լինելու դեպքում մերժում է անվանական կազմում առաջարկված անձի կամ անձանց թեկնածությունը:

- **Ինչպե՞ս է ընտրվում խորհրդի նախագահը:**

Խորհրդի առաջին նիստը վարում է տարիքով ավագը: Խորհուրդը գաղտնի քվեարկությամբ ընտրում է խորհրդի նախագահ: Ընտրության չկայանալու դեպքում տասնօրյա ժամկետում անցկացվում է կրկնակի քվեարկություն: Ընտրությունը նորից չկայանալու դեպքում խորհրդի անդամներից մեկը՝ վիճակահանությամբ նշանակվում է նախագահ:

- **Գործու՞մ է արդյոք խորհուրդների «Հանրակրթական համակարգի բարեփոխումների ծրագրում ընդգրկված հաստատության կանոնադրությունը»:**

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2006թ. դեկտեմբերի 8-ի 979-Ն հրամանով այն ուժը կորցրած է ճանաչվել: Խորհր-

դի լիազորությունները սահմանված են ՀՀ Կառավարության 2002թ. հուլիսի 25-ի թիվ 1392-Ն հրամանով՝ հաստատված պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրության 47- 49 կետերում:

- **Ո՞վ է կազմակերպում ուսումնական հաստատության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ:**

Ուսումնական հաստատության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթը հայտարարում, կազմակերպում և անցկացնում է դպրոցի խորհուրդն առավելագույնը եռամսյա ժամկետում:

- **Եթե խորհուրդը եռամսյա ժամկետում չի կարողանում ապահովել գործադիր տնօրենի ընտրության մրցույթի կազմակերպումը կամ իր մյուս կանոնադրական պարտականությունները (քվորումի բացակայություններ, ոչ մի հավակնորդ չի հաղթահարում իմացության 80%-ի շեմը, ոչ մի հավակնորդ չի ստանում առնվազն 4 ձայն, տարբեր հիմքերով ընտրությունը ճանաչվում է անվավեր, չեն պահպանվում հաստատության կանոնադրության 49-րդ կետի դրույթները), ինչպե՞ս է լուծվում անդամ(ներ)ի կամ խորհրդի հետագա ճակատագիրը:**

1. Լիազորված մարմինը կարող է առաջնորդվելով ՀՀ «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-Ի օրինակելի կանոնադրության 34-րդ, 35-րդ կետի «ա», «բ», «գ», 47-րդ կետի «ա», 49-րդ և 56-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով տնօրենի ընտրության կարգի 1-ին

կետի պահանջը, քննարկել խորհրդի անդամ(ներ)ի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հարցը: Բացառիկ դեպքերում լիազորված մարմինը կարող է քննարկել նաև անգործունյա, կանոնադրական պարտականությունները չկատարող խորհրդի լիազորության դադարեցման հարցը և կայացնել համապատասխան որոշում:

- **Ուսումնական հաստատության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի մրցույթի մասին խորհուրդը պարտավո՞ր է տեղեկացնել տարածքային կառավարման մարմնին (լիազորված մարմին):**

Խորհրդի նախագահը (նախագահողը)՝ հաստատության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի մրցույթ անցկացնելու մասին խորհրդի նիստի արձանագրության քաղվածքը եռօրյա ժամկետում ներկայացնում է համապատասխան տարածքային կառավարման մարմնին:
Լիազորված մարմինը պաշտոնապես հրավիրում է նախարարության ներկայացուցչին՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանող մրցույթին մասնակցելու համար:

- **Խորհուրդն ինչպե՞ս է մրցույթի հայտարարության մասին տեղեկացնում հանրությանը:**

Հաստատության խորհուրդը գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը՝ 5 օրյա պարբերականությամբ առնվազն 2 անգամ հրապարակում է զանգվածային լրատվության միջոցներով, առնվազն մեկը՝ մամուլով: Մրցույթ անցկացնելու մասին հայտարարության տեքստում պարտադիր է նշել մրցույթի անցկացման վայրը, օրը, ժամը, տեղը, պայմանները և պահանջվող փաստաթղթերը:

- **Խորհուրդը իրավունք ունի՞ նիստը հետաձգել:**

Գործադիր տնօրենի պաշտոնի հավակնորդի մրցույթին չներկայանալու դեպքում խորհուրդը կարող է որոշում կայացնել մրցույթը շարունակելու կամ հետաձգելու մասին: Մրցույթը կարող է հետաձգվել ոչ ավելի, քան մեկ անգամ՝ երեք օրով:

- **Եթե ՀՀ ԿԳՆ ներկայացուցիչը գործադիր տնօրենի մրցույթին չի ներկայանում, ի՞նչ պետք է կատարի խորհուրդը:**

Խորհուրդը պետք է արձանագրի փաստը և պաշտոնապես տեղեկացնի ՀՀ ԿԳՆ ներկայացուցչին հրավիրող մարմնին՝ (մարզպետ, Երևանի քաղաքապետ) և հնարավորության դեպքում՝ ՀՀ ԿԳ նախարարությանը:
Ստանալով լիազորված մարմնի և (կամ) ՀՀ ԿԳՆ մեկնաբանությունները, ողջամիտ ժամկետով հետաձգում է մրցույթի նիստը: Փորձագետի չներկայանալը նոր մրցույթ հայտարարելու հիմք չի հանդիսանում:

- **Ո՞վ կարող է մասնակցել ուսումնական հաստատության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթին:**

Հաստատության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության գործունակ չափահաս քաղաքացին, որը տիրապետում է գրական հայերենին և ունի բարձրագույն կրթություն, հանրակրթական, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտներում առնվազն 5 տարվա մանկավարժական աշխատանքի ստաժ (վերջին 10 տարվա ընթացքում) կամ կրթութ-

յան կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա աշխատանքի ստաժ, կրթության համակարգի օրենսդրության, աշխատանքային օրենսգրքի և իրավական այլ ակտերի իմացություն, ֆինանսատնտեսական գործունեության իրականացման, հաստատության կառավարման և ներդպրոցական վերահսկողության վերաբերյալ փաստաթղթեր կազմելու կարողություն, համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

- **Ուսումնասիրվու՞մ են արդյոք հավակնորդի փաստաթղթերի առկայությունը և համապատասխանությունը սահմանված պահանջներին:**

Հավակնորդի համար սահմանված պարտադիր չափանիշների համապատասխանությունը և փաստաթղթերի առկայությունը ուսումնասիրվում են.

ա/ խորհրդի կողմից փաստաթղթերի ընդունման և նիստի ընթացքում,

բ/ տարածքային կառավարման մարմնի կողմից (փաստաթղթերը և ՀՀ օրենքներով սահմանված պահանջները), մինչև աշխատանքային պայմանագրի կնքումը,

գ/ անհրաժեշտության դեպքում բոլոր փաստաթղթերը կարող են նորից ուսումնասիրվել բուն մրցույթի ընթացքում՝ ՀՀ ԿԳՆ ներկայացուցչի կողմից: *Հավակնորդը պարտավոր է իր դիմումում նշել պարտադիր պահաջների հավաստիության մասին*:

- **Ի՞նչ կարգով են վերանայվում տնօրենի մրցույթի արդյունքները:**

Մրցույթի արդյունքները կարող են վերանայվել «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատություն պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի մրցույթի անցկացման կարգի» և (կամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման հիմքով՝ մրցույթի մասնակցի, տարածքային կառավարման մարմնի գրավոր բողոքների հիման վրա (ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում).

ա/ դատական կարգով,

բ/ ՀՀ ԿԳ նախարարության հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ տարածքային կառավարման մարմնի կողմից:

Տվյալ կարգի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման հիմքով մրցույթի մասնակցի, տարածքային կառավարման մարմնի գրավոր բողոքների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի ներկայացուցչի բացասական եզրակացության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով (հանձնաժողովում ընդգրկվում են՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների մասնագետները), որն իր ուսումնասիրության արդյունքների մասին գրավոր եզրակացություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին: Վերջինս հիմք ընդունելով հանձնաժողովի եզրակացությունը՝ համապատասխան առաջարկությամբ կարող է դիմել մարզպետին (Երևանի քաղաքապետին):

- **Ո՞վ չի կարող մասնակցել պետական կազմակերպության (դպրոցի) գործադիր տնօրենի պաշտոնի համար հայտարարված մրցույթին:**

Պետական կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում չի կարող նշանակվել այն անձը, որը.

ա/ դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

բ/ տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը կամ լիազորությունների իրականացմանը,

գ/ խուսափել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից,

դ/ դատապարտվել է հանցագործության կատարման համար և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ,

ե/ զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից կամ օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել,

զ/ նախորդ 3 տարվա ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և կազմակերպության պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

- **Ի՞նչ փաստաթղթեր են պահանջվում մրցույթին մասնակցելու համար**:

Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են.

ա/ դիմում հաստատության խորհրդի նախագահի անունով,

բ/ ինքնակենսագրություն (ձեռագիր),

գ/ բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
դ/ կադրերի հաշվառման անձնական թերթիկը,
ե/ աշխատանքային գրքույկի պատճենը (կամ քաղվածքը),
զ/ բնութագիր-երաշխավորագիր (աշխատողների համար),
է/ անձնագրի պատճենը,
ը/ տեղեկանք առողջության մասին,
թ/ տեղեկանք մշտական բնակավայրից,
ժ/ հրատարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),
ժա/ ծրագիր (թեզիսներ) տվյալ հաստատության գործունեության և զարգացման խնդիրների մասին,
ժբ/ սոցիալական քարտի պատճենը (առկայության դեպքում):

- **Սահմանվա՞ծ է արդյոք ժամկետ մրցույթի մասնակիցների փաստաթղթերի ընդունման համար:**

Մրցույթին մասնակցելու համար դիմումների (գործերի) ընդունման համար սահմանվում է առնվազն 30-օրյա ժամկետ, որը հաշվարկվում է մրցույթի անցկացման մասին զանգվածային լրատվության միջոցով առաջին հրապարակման օրվանից: Մրցույթին մասնակցելու համար դիմումների և գործերի ընդունման վայրը չի կարող տվյալ բնակավայրից դուրս լինել:

- **Որպես հավակնորդ գործադիր տնօրենի պաշտոնակատարը կարո՞ղ է մասնակցել մրցույթին**:

Գործադիր տնօրենի պաշտոնակատարը մրցույթին կարող է մասնակցել մրցութային փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտից առնվազն 20 օր առաջ՝ լիազորությունները դա-

դարեցնելու պայմանով: Այդ դեպքում տարածքային կառավարման մարմինը նշանակում է գործադիր տնօրենի այլ պաշտոնակատար:

- **Ի՞նչ ընթացակարգով է անցկացվում մրցույթը**:

Մրցույթին ներկայացած հավակնորդի մասնագիտական գիտելիքները որոշում են հաստատության խորհուրդը և հրավիրված ներկայացուցիչը՝ 40 թեստային և բանավոր հարցերի միջոցով,

ա/ հավակնորդը թույլատրվում է բանավոր փուլին և գաղտնի քվեարկությանը, եթե ճիշտ է պատասխանել գրավոր հարցերի (թեստերի) առնվազն 80%-ին,

բ/ հարցերի համալիր փաթեթը՝ տարբերակը, որոշվում է վիճակահանությամբ, նախապես հրապարակված հարցաշարից:

Բանավոր փուլ անցած հավակնորդին, մինչև գաղտնի քվեարկությունը, տրվում են 3-5 մասնագիտական հարցեր:
Հարցերը, պատասխանները և մրցույթի ողջ ընթացքը արձանագրվում է (հնարավորության դեպքում՝ նաև ձայնագրվում):
Թեստային առաջադրանքները ընտրվում են համակարգչով կամ խորհրդի կողմից անցկացված վիճակահանությամբ: Վիճակահանության առնվազն 3 տարբերակները ներկայացնում է ՀՀ ԿԳՆ ներկայացուցիչը:

- **Եթե գործադիր տնօրենի ընտրության նիստը մասնակիցներից որևէ մեկը ցանկանում է ձայնագրել ու՞մ թույլտվությունն է անհրաժեշտ:**

Մասնակիցների ելույթների, հարցերի, պատասխանների,

քննարկումների, կատարված առաջարկությունների ձայնագրման համար որևէ կողմի համաձայնության անհրաժեշտություն չկա: Կատարված ձայնագրությունը համարվում է օրինական:

- **Բանավոր հարցերին տրված պատասխանները ի՞նչ ազդեցություն են գործում քվեարկության փուլի վրա**

Բանավոր փուլի մասնագիտական հարցերին հավակնորդների տված «ճիշտ» կամ «սխալ» պատասխանների քանակը քվեաթերթում գրանցվելու վրա չի ազդում: Այն կարող է ընդամենը կողմնորոշել խորհրդի անդամներին քվեարկությունից առաջ:

- **Ո՞ր հավակնորդն է ընտրված համարվում:**

Ընտրված է համարվում այն հավակնորդը, որին գաղտնի քվեարկությամբ կողմ են քվեարկել խորհրդի առնվազն 4 անդամ: Մրցույթի արդյունքների հիման վրա խորհրդի նախագահը (նախագահողը) հրապարակում է խորհրդի որոշումը:

- **Եթե խորհրդի անդամները միաձայն որոշում են անցկացնել տնօրենի պաշտոնի հավակնորդների ընտրության «բաց» քվեարկություն, այդ քվեարկությունը կհամարվի օրինական թե՞ ոչ:**

Ոչ, նրանք պարտավոր են անցկացնել գաղտնի քվեարկություն, ինչպես որ նախատեսված է գործող կարգով:

- **Քվեարկության արդյունքում տնօրեն չընտրվելու դեպքում ի՞նչ որոշում է կայացնում խորհուրդը:**

Եթե մրցույթում գործադիր տնօրեն չի ընտրվում, ապա մեկից ավելի ձայն հավաքած հավակնորդի (կամ հավակնորդների) մասնակցությամբ, նույն օրվա ընթացքում անցկացվում է կրկնակի քվեարկություն: Կրկնակի քվեարկությամբ ևս տնօրեն չընտրվելու դեպքում հայտարարվում է նոր մրցույթ:

- **Ո՞վքեր կարող են մասնակցել գործադիր տնօրենի մրցույթի նիստին:**

Տարածքային կառավարման մարմնի ներկայացուցիչը և գործադիր տնօրենի պաշտոնակատարը մրցույթին կարող են մասնակցել որպես դիտորդ, իսկ կրթամշակութային գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են մասնակցել մրցույթին և լուսաբանել այն:

- **Եթե խորհրդի անդամները տնօրենի պաշտոնի հավակնորդի հետ գտնվում են արյունակցական, բարեկամական, կուսակցական կապերի մեջ, ապա նրանք կարո՞ղ են մասնակցել տնօրենի ընտրության մրցույթին, թե ոչ:**

Գործադիր տնօրենի ընտրության կարգի համաձայն, հարազատների, բարեկամների հանգամանքը հավակնորդների գրանցման և քվեարկման համար արգելք չեն հանդիսանում: Լիազորված մարմինը իրավունք չունի այդ հիմքով խորհրդի կազմի փոփոխում նախաձեռնել:

- **Ո՞ր դեպքում կարող է դադարեցվել գործադիր տնօրենի լիազորությունները:**

Գործադիր տնօրենի լիազորությունները դադարեցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում:

- **Եթե մրցույթում տնօրեն չի ընտրվում, ապա ձայն չհավաքած կամ թեստային առաջադրանքը չհաղթահարած հավակնորդ(ներ)ը կարո՞ղ է (են) մասնակցել նոր հայտարարված մրցույթին:**

Կարող է (են), եթե այդ ժամանակահատվածում գործադիր մարմնի պաշտոնում նշանակումը բացառող ՀՀ օրենսդրությամբ և տնօրենի ընտրության կարգով սահմանված պատճառներ ի հայտ չեն եկել:

- **Խորհրդի նախաձեռնությամբ, ո՞ր դեպքերում է նպատակահարմար հաստատությունում աուդիտ անցկացնել:**

1. Հաստատությունում տնօրենի փոփոխման (ընտրությունների կապակցությամբ),
2. ֆինանսական և (կամ) նյութական պատասխանատու անձանց, օրենքով նախատեսված պատասխանատվության ենթարկելու դեպքում,
3. նորընտիր տնօրենի կամ լիազոր մարմնի առաջարկությամբ:

- **Եթե հաստատության տնօրենը ընտրվել էր 3 տարի ժամկետով, ապա լիազոր մարմինը կարո՞ղ է, նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո, նոր պայմանագիր կնքել և խորհրդի կողմից մրցույթի հայտարարությունը 2 տարով կասեցնել:**

Ոչ, չի կարող, քանի որ ՀՀ «Աշխատանքային օրենսգրքի» 95 հոդվածի 2-րդ մասի պահանջի համաձայն «Ընտրովի պաշտոններում աշխատողների հետ աշխատանքային պայմանագիրը կնքվում է ընտրված ժամանակահատվածով»:

Հավելված 1

25 հուլիսի 2002 թվականի N 1392-Ն
«Հայաստանի Հանրապետության պետական
հանրակրթական ուսումնական հաստատություններ»
պետական ոչ առեւտրային կազմակերպությունների
օրինակելի կանոնադրությունը հաստատելու որոշումից

ՔԱՂՎԱԾՔՆԵՐ

4. Թույլատրել "Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ" պետական ոչ առեւտրային կազմակերպություններին իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետեւյալ տեսակները՝

ա) լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում.

բ) դպրոցական դաստիարակության կազմակերպում.

գ) համակարգչային ծրագրերի եւ լեզուների ուսուցման կազմակերպում. սննդի կազմակերպում.

ե) ուսումնաարտադրական գործունեության ծավալում եւ արտադրանքի իրացում:

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2002 թվականի
հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

II. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10. Հաստատության գործունեության առարկան եւ նպատակը հանրակրթական բնույթի գործունեության իրականացումն է:

11. Հաստատությունը կրթական գործունեությունն իրականացնում է ի շահ անհատի, հասարակության եւ պետության, ապահովում է աշակերտների կողմից հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, պայմաններ է ստեղծում ինքնակրթության և լրացուցիչ (նախասիրական, նախամասնագիտական) կրթության պահանջմունքների բավարարման համար:

12. Հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության եւ մարդասիրության, հանրամատչելիության, ազգային եւ համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության եւ կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

13. Հաստատությունը պատասխանատու է պետական չափորոշիչներին, հանրակրթական պետական ծրագրերին, սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգե-

բանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաեւ նրանց կյանքի անվտանգության եւ առողջության պահպանման համար:

14. Հաստատությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ, իսկ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով՝ միայն լիցենզիայի հիման վրա:

IV. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

33. Հաստատության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) հաստատության հիմնադրումը.

բ) հաստատության գործունեության առարկայի եւ նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ) հաստատությանը սեփականության իրավունքով հանձնվող եւ (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմի հաստատումը.

դ) հաստատության կանոնադրության հաստատումը եւ դրանում փոփոխությունների կատարումը.

ե) հաստատության կառավարման համակարգի սահմանումը.

զ) հաստատության վերակազմակերպումը եւ լուծարումը.

է) հաստատության լուծարման հանձնաժողովի նշանա-

կումը եւ լուծարման հաշվեկշռի հաստատումը.

ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ եւ սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

34. Լիազորված պետական մարմինն իրականացնում է հաստատության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը եւ պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

35. Լիազորված պետական մարմինը՝

ա) հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է նրա կառավարման մարմինների ձեւավորումը եւ նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ) վերահսկողություն է իրականացնում հաստատության գործունեության նկատմամբ.

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում հաստատության գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

դ) լսում է հաստատության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ե) վերահսկողություն է իրականացնում հաստատությանն ամրացված պետական սեփականության օգտագործման եւ պահպանության նկատմամբ.

զ) վերահսկողություն է իրականացնում հաստատության սեփականության պահպանության նկատմամբ,

իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ հաստատության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է հաստատության տարեկան հաշվետվությունները եւ տարեկան հաշվեկշիռը (եթե հաստատությունը չունի կոլեգիալ կառավարման մարմին).

ը) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով եւ հաստատության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

36. Հաստատության տնօրենն իրականացնում է հաստատության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, հիմնադրի եւ լիազորված մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ եւ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է հաստատության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության եւ կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

37. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս հաստատության անունից, ներկայացնում նրա շահերը եւ կնքում գործարքներ.

բ) մասնակցում է հաստատության խորհրդի նիստերին՝ խորհրդակցական ձայնի իրավունքով.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի եւ լիազորված պետական մարմնի որոշումներով եւ սույն կանոնադրությամբ սահմանված

կարգով տնօրինում է հաստատության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

դ) տալիս է հաստատության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

ե) աշխատանքի նշանակում եւ աշխատանքից ազատում է հաստատության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ եւ նշանակում կարգապահական տույժեր.

զ) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

է) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջեւ.

ը) օրենքով եւ սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ եւ վերահսկում դրանց կատարումը.

թ) իրականացնում է մանկավարժական կադրերի ճիշտ ընտրություն եւ անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

ժ) վերահսկողություն է իրականացնում դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, արտադասարանական եւ արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, հաստատության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

ժա) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանութ-

յան եւ անվտանգության տեխնիկայի պահպանումը.

ժբ) աջակցում է հաստատության մանկավարժական, հոգաբարձուների եւ ծնողական խորհուրդների աշխատանքներին.

ժգ) կազմում է հաստատության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը եւ դրանք, հաստատության խորհրդի առաջարկությամբ, ներկայացնում կառավարման մարմնի հաստատմանը.

ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող եւ հաստատության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

38. Տնօրենի բացակայության դեպքում, նրան նշանակված մարմնի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:

39. Հաստատության տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը՝

ա) պատասխանատու է հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի իրականացման, դասավանդման որակի եւ սովորողների գիտելիքների մակարդակի համար.

բ) վերահսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության եւ վարքի նկատմամբ, կանոնակարգում սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը.

գ) հաստատությունում կազմակերպում է մեթոդական աշխատանք, կազմում ուսումնական պարապմունքների դասացուցակ եւ ուսումնադաստիարակչական

աշխատանքի վիճակի մասին հաշվետվություններ.

դ) ղեկավարում է առարկայական մեթոդական միավորումների աշխատանքը, ընդհանրացնում եւ տարածում լավագույն ուսուցիչների աշխատանքի դրական փորձը, ուսուցիչներին հաղորդակից դարձնում գիտության եւ մանկավարժության նորագույն նվաճումներին:

40. Հաստատության տնօրենի՝ դաստիարակչական աշխատանքի գծով տեղակալը՝

ա) կազմակերպում եւ ղեկավարում է սովորողների դաստիարակչական, արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներն ու դասղեկների գործունեությունը.

բ) ապահովում է հաստատության եւ ընտանիքի սերտ կապն ու համագործակցությունը.

գ) կազմակերպում է սովորողների հանգիստն ու ժամանցը, միջոցներ է ձեռնարկում սոցիալապես անապահով երեխաներին օգնություն ցույց տալու համար:

41. Հաստատության տնօրենի՝ տնտեսական աշխատանքի գծով տեղակալը՝

ա) պատասխանատու է հաստատության շենքի եւ գույքի պահպանման, ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման, հաստատության սանիտարահիգիենիկ ու բարեկարգ վիճակի, հաստատության ուսումնական պարապմունքներին՝ դասասենյակների ժամանակին նախապատրաստման, հակահրդեհային պաշտպանության եւ սպասարկող անձնակազմի աշխատանքի կազմակերպման համար.

բ) միջոցներ է ձեռնարկում հաստատության ուսումնա-

նյութական բազան հարստացնելու եւ ամրապնդելու համար:

42. Դասարանի ղեկավարը (դասղեկը)՝

ա) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում՝ սերտորեն համագործակցելով մյուս ուսուցիչների հետ.

բ) ապահովում է սովորողների նկատմամբ հաստատության եւ ընտանիքի մանկավարժական պահանջների միասնականությունը.

գ) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

դ) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, հաստատության տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների եւ վարքի մասին տեղեկություններ.

ե) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ, հետեւում տնային հանձնարարությունների կատարմանը, ուսման եւ հանգստի կազմակերպմանը.

զ) հաստատության մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում վարքի կանոնները կոպտորեն խախտած սովորողի հարցը.

է) արգելում է սովորողների, ուսուցիչների եւ ծնողների այն նախաձեռնությունները, որոնք կարող են սովորողի առողջության, կյանքի համար վտանգ պարունակել կամ խաթարել ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացումը:

43. Պետական լիազորված մարմինը հաստատության խորհուրդ ստեղծելու մասին որոշում ընդունելուց հետո 30 օրվա ընթացքում կազմակերպում է խորհրդի ընտրության գործընթացը:

Խորհրդի անդամների թեկնածուներ, ըստ նախարարության կողմից հաստատված խորհրդի ընտրության կարգի, առաջադրում են՝ հաստատության մանկավարժական խորհուրդը, որը նիստում, փակ քվեարկությամբ, որոշում է հաստատության խորհրդի անդամների իր թեկնածուներին, հաստատության ծնողական խորհուրդը, որը նիստում, փակ քվեարկությամբ, որոշում է խորհրդի անդամների (անդամի) իր թեկնածուներին (թեկնածուին), պետական կառավարման լիազորված մարմինը եւ տեղական ինքնակառավարման մարմինը: Պետական կառավարման լիազորված մարմինը խորհրդի անվանական կազմը հաստատում է 7 օրվա ընթացքում:

Խորհրդի անդամ կարող են առաջադրվել միայն ֆիզիկական անձինք:

Հաստատության տնօրենը չի կարող առաջադրվել (ընտրվել) խորհրդի կազմում:

(43-րդ կետը փոփ. 11.05.06 թիվ 631-Ն որոշում)

44. Խորհրդի անդամների թիվը եւ բաշխումը համապատասխանաբար՝ ըստ հաստատության մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի, պետական կառավարման լիազորված մարմնի եւ տեղական ինքնակառավարման մարմնի, կատարվում են նախարարության սահմանած կարգով:

(44-րդ կետը փոփ. 11.05.06 թիվ 631-Ն որոշում)

45. Խորհրդի լիազորությունների ժամկետը 3 տարի է:

46. Հաստատության խորհրդի առաջին նիստը գումարվում է լիազորված պետական մարմնի պահանջով՝ խորհրդի

անվանական կազմի հաստատումից հետո՝ 7 օրվա ընթացքում:

Խորհրդի առաջին նիստում, խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ, փակ քվեարկությամբ ընտրվում է խորհրդի նախագահ՝ խորհրդի լիազորության ամբողջ ժամկետով: Խորհրդի նախագահի լիազորությունները կարող են դադարել իր դիմումի համաձայն:

47. Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են՝

ա) առաջադրողի նախաձեռնությամբ եւ խորհրդի որոշմամբ.

բ) իր դիմումի համաձայն:

Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման դեպքում նրան առաջադրող մարմինը 20-օրյա ժամկետում ներկայացնում է նոր թեկնածություն:

48. Խորհուրդը՝

ա) նախարարության կողմից սահմանված մրցույթի անցկացման կարգի համաձայն ընտրում է հաստատության տնօրեն, հաստատում է նրա հետ կնքվող աշխատանքային պայմանագիրը, վաղաժամկետ դադարեցնում նրա լիազորությունները, սահմանում տնօրենի վարձատրության կարգը եւ պայմանները.

բ) որոշում է ընդունում հաստատության առուղիտն անցկացնելու մասին (հաստատության բյուջեի հաշվին) եւ հաստատում առուղիտն իրականացնողի վարձատրության չափը.

գ) հաստատում է հաստատության ներքին կարգապահական կանոնները, քննարկում հաստատության ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաստիքային ցուցակը եւ առաջարկություն ներկայացնում պետա-

կան կառավարման լիազորված մարմին.

դ) քննարկում է ֆինանսատնտեսական եւ ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվություններն ու հաջորդ տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը.

ե) հիմնադրի կողմից սահմանված կարգով որոշում է հաստատության շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները.

զ) հաստատում է իր աշխատակարգը, ընտրում խորհրդի նախագահ.

է) հաստատության գործունեության բնագավառին, նպատակներին եւ խնդիրներին համապատասխան՝ առաջարկություններ է ներկայացնում պետական կառավարման լիազորված մարմին.

ը) իրականացնում է օրենքով, հիմնադրի կողմից իրեն վերապահված եւ (կամ) սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորությունները:

49. Խորհրդի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել հիմնադրի որոշմամբ՝

ա) սահմանված կարգի խախտմամբ տնօրեն ընտրելու դեպքում.

բ) տնօրենի՝ պաշտոնավարության ընթացքում խախտումներ թույլ տալու կապակցությամբ նրա հետ կնքված աշխատանքային պայմանագրի գործողության դադարեցման մասին որոշում չընդունելու դեպքում:

50. Պետական լիազորված մարմնի (նրա ղեկավարի) կամ հաստատության ենթակայության փոփոխումը չի կարող հիմք հանդիսանալ խորհրդի լիազորությունների դադարեցման համար:

51. Խորհրդի նախագահը՝

ա) կազմակերպում է խորհրդի աշխատանքները.

բ) նախագահում է խորհրդի նիստերը.

գ) կազմակերպում է խորհրդի նիստերի արձանագրությունների վարումը եւ վավերացնում դրանք:

52. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում, խորհրդի որոշմամբ, նրա պարտականությունները կատարում է խորհրդի անդամներից մեկը:

53. Խորհրդի նիստերը գումարվում են նրա նախագահի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, ինչպես նաեւ լիազորված պետական մարմնի, տնօրենի, խորհրդի անդամների 1/3-ի պահանջով: Խորհրդի անդամների 1/3-ի պահանջով նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում եւ կարգով:

54. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ավելին:

55. Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ խորհրդի անդամն ունի միայն մեկ ձայնի իրավունք: Չի թույլատրվում ձայնի եւ քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի:

Խորհրդի նիստերն արձանագրվում են:

Խորհրդի անդամի լիազորությունները կասեցվում են տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու դեպքում:

56. Հաստատության լիազորված պետական մարմնի ղեկավարը, տնօրենը, նրա տեղակալները, խորհրդի անդամները հաստատության անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն եւ ողջամտորեն՝ ի շահ իրենց կողմից ներկայաց-

վող հաստատության:

57. Հաստատության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաեւ օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

V. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՆՐԱՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

58. Հաստատության սեփականությունը ձեւավորվում է հաստատության հիմնադրման ժամանակ եւ հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաեւ հաստատության գործունեության ընթացքում արտադրված եւ ձեռք բերված գույքից:

59. Հաստատությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին եւ (կամ) իր կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու եւ օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

60. Հիմնադիրը սեփականության իրավունքով հաստատությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ հաստատության լուծարումից հետո մնացած գույքի:

66. Հաստատությունը ֆինանսավորում է հիմնադիրը: Հաստատության ֆինանսական միջոցները գոյանում են բյուջետային եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

67. Հաստատության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վճարովի կրթական ծառայությունների մատուցումից ստացված միջոցները.

բ) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված եւ հաստատության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

68. Հաստատության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից:

VI. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ, ՍՈՎՈՐՈՂԸ ԵՎ ԾՆՈՂԸ

69. Հաստատությունում մանկավարժական աշխատանքի կարող է ընդունվել մանկավարժի որակավորում ունեցող մասնագետը, բացառիկ դեպքերում՝ ոչ մանկավարժական կրթություն ունեցող անձը, որի՝ հաստատությունում աշխատելու կարգը եւ պայմանները սահմանում է նախարարությունը:

70. Հաստատության մանկավարժն իրավունք ունի մասնակցելու հաստատության կառավարմանը: Հաստատության մանկավարժական եւ մյուս աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

71. Հաստատության մանկավարժական աշխատողները պարտավոր են **ապահովել** կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական պետական չափորոշիչներով որոշվող ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը սովորողների կողմից:

72. Հաստատության մանկավարժական աշխատողները կարող են ընտրել եւ կիրառել նախարարության երաշխավորած ուսուցման, ուսումնական նյութերից եւ ձեռնարկներից որեւէ մեկը կամ կամ մի քանիսը:

73. Սովորողն իրավունք ունի՝

ա) անվճար ստանալու տարրական ընդհանուր, հիմնական ընդհանուր եւ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն.

բ) անկախ բնակության վայրից՝ սահմանված կարգով ընտրելու հաստատությունը եւ ուսուցման ձեւը.

գ) անվճար օգտվելու հաստատության առանձին ծառայություններից.

դ) հաստատությունում յուրացնելու լրացուցիչ վճարովի կրթական ծրագրեր.

ե) ազատ արտահայտելու սեփական հայացքներն ու համոզմունքները.

զ) առանց հիմնական կրթություն ստանալու՝ 16 տարին լրանալուց հետո, ծնողների (որդեգրողների կամ հոգաբարձուի) համաձայնությամբ, թողնելու ուսումը:

Հավելված 2

ՀՀ ԿԳ նախարարի 2006 թվականի
դեկտեմբերի 8-ի N 980-Ա/Ք հրամանի

ԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմկերպության գործադիր մարմնի պաշտոնի (տնօրենի) մրցույթի, ընտրության և նշանակման:

1. «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմկերպության (այսուհետև՝ հաստատություն) գործադիր տնօրենի թափուր պաշտոն առաջանալու դեպքում հաստատության խորհուրդը, առավելագույնը եռամսյա ժամկետում, հայտարարում, կազմակերպում և անցկացնում է գործադիր տնօրենի թափուր տեղի համար մրցույթ:

2. Հաստատության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության գործունակ չափահաս քաղաքացին, որը տիրապետում է գրական հայերենին:

3. Պետական կազմակերպության գործադիր տնօրենի պաշտոնում չի կարող նշանակվել այն անձը՝

ա/ որը դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

բ/ տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը կարող է

խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանը կամ լիազորությունների իրականացմանը.

գ/ խուսափել է ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից.

դ/ որը դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

ե/ որին օրենքի համաձայն արգելվել է որոշակի պաշտոններ զբաղեցնել կամ որը զրկվել է որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

զ/ որը նախորդ 3 տարվա ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և կազմակերպության պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

4. Խորհրդի նախագահը (նախագահողը/՝ հաստատության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի մրցույթ անցկացնելու մասին խորհրդի նիստի արձանագրության քաղվածքը եռօրյա ժամկետում ներկայացնում է համապատասխան տարածքային կառավարման մարմնին.

ա/ մրցույթին մասնակցելու համար դիմումների (գործերի) ընդունման համար սահմանվում է առնվազն 30-օրյա ժամկետ, որը հաշվարկվում է մրցույթի անցկացման մասին զանգվածային լրատվության միջոցով առաջին հրապարակման օրվանից,

բ/ մրցույթին մասնակցելու համար դիմումների և գործերի ընդունման վայրը չի կարող տվյալ բնակավայրից դուրս լինել:

5. Գործադիր տնօրենի պաշտոնակատարը մրցույթին կարող է մասնակցել մրցութային փաստաթղթերի ընդունման

ժամկետի ավարտից առնվազն 20 օր առաջ՝ լիազորություն-ները դադարեցնելու պայմանով:

Այդ դեպքում տարածքային կառավարման մարմինը նշանակում է գործադիր տնօրենի այլ պաշտոնակատար:

6. Հաստատության խորհուրդը գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը՝ 5 օրյա պարբերականությամբ առ-նվազն 2 անգամ հրապարակում է զանգվածային լրատվության միջոցներով, առնվազն մեկը՝ մամուլով,

բ/ մրցույթ անցկացնելու մասին հայտարարության տեքստում պարտադիր է նշել մրցույթի անցկացման վայրը, օրը, ժամը, տեղը, պայմանները և պահանջվող փաստաթղթերը,

գ/ Գործադիր տնօրենի պաշտոնի հավակնորդի՝ (այսուհետև՝ հավակնորդ) մրցույթին չներկայանալու դեպքում խորհուրդը որոշում է կայացնում մրցույթը շարունակելու կամ հետաձգելու մասին: Մրցույթը կարող է հետաձգվել ոչ ավել, քան մեկ անգամ երեք օրով:

7. Մրցույթը համարվում է իրավազոր, եթե դրան մասնակցել է խորհրդի անդամներից առնվազն 5-ը:

8. Մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերն են.

ա/ դիմում հաստատության խորհրդի նախագահի անունով,

բ/ ինքնակենսագրություն (ձեռագիր),

գ/ բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

դ/ կադրերի հաշվառման անձնական թերթիկը,

ե/ աշխատանքային գրքույկի պատճենը (կամ քաղվածքը),

զ/ բնութագիր-երաշխավորագիր (աշխատողների համար),

է/ անձնագրի պատճենը,

ը/ տեղեկանք առողջության մասին,

թ/ տեղեկանք մշտական բնակավայրից,

ժ/ հրատարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրանց առկայության դեպքում),

ժա/ ծրագիր (թեզիսներ) տվյալ հաստատության գործունեության և զարգացման խնդիրների մասին

ժբ/ սոցիալական քարտի պատճենը (առկայության դեպքում):

9.Հավակնորդներին ներկայացվող պարտադիր չափանիշներն են.

ա/ բարձրագույն կրթություն.

բ/ հանրակրթական, նախնական մասնագիտական, միջին մասնագիտական և բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտներում առնվազն 5 տարվա մանկավարժական աշխատանքի ստաժ (վերջին 10 տարվա ընթացքում) կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն 3 տարվա աշխատանքի ստաժ.

գ/ կրթության համակարգի օրենսդրության, աշխատանքային օրենսգրքի և իրավական այլ ակտերի իմացություն.

ե/ ֆինանսատնտեսական գործունեության իրականացման հաստատության կառավարման և ներդպրոցական վերահսկողության վերաբերյալ փաստաթղթեր կազմելու կարողություն.

զ/ համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

է/ առնվազն մեկ օտար լեզվի իմացություն :

10. Մրցույթն անցկացնում է հաստատության խորհուրդը և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչը:

10-1. Մրցույթի անցկացման մասին նախարարության ներկայացուցիչը տեղեկացվում է տարածքային կառավարման մարմնի կողմից:

10-2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ներկայացուցիչը քվեարկելու իրավունք չունի:

11.Մրցույթն անցկացվում է երկու փուլով.

ա/ փաստացի գիտելիքների իմացության որոշում գրավոր (թեստավորում),

բ/բանավոր հարցազրույց և գաղտնի քվեարկություն:

12. Մրցույթին ներկայացած հավակնորդի մասնագիտական գիտելիքները որոշում են հաստատության խորհուրդը և հրավիրված ներկայացուցիչը՝ 40 թեստային և բանավոր հարցերի միջոցով,

ա/ հավակնորդը թույլատրվում է բանավոր փուլին և գաղտնի քվեարկությանը, եթե ճիշտ է պատասխանել գրավոր հարցերի (թեստերի) առնվազն 80%-ին,

գ/ հարցերի համալիր փաթեթը որոշվում է վիճակահանությամբ, նախապես հրապարակված հարցերից (Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, աշխատանքային օրենսգիրք, Հայաստանի Հանրապետության «Կրթության մասին» օրենք, ինչպես նաև հանրակրթության կառավարման, ֆինանսավորման և տեսչավորման վերաբերյալ այլ օրենքներ, Հայաստանի Հանրապետության կառավարութ-

յան որոշումներ և այլ իրավական ակտեր):

13. Բանավոր փուլ անցած հավակնորդին, մինչև գաղտնի քվեարկությունը, տրվում են 3-5 մասնագիտական հարցեր:

14. Հարցերը, պատասխանները և մրցույթի ողջ ընթացքը արձանագրվում է (հնարավորության դեպքում՝ նաև ձայնագրվում):

15. Ընտրված է համարվում այն հավակնորդը, որին գաղտնի քվեարկությամբ կողմ են քվեարկել խորհրդի առնվազն 4 անդամ.

ա/ մրցույթի արդյունքների հիման վրա խորհրդի նախագահը (նախագահողը) հրապարակում է խորհրդի որոշումը:

16. Տարածքային կառավարման մարմինը խորհրդի որոշման հիման վրա ընտրված տնօրենի հետ(տասն օրից ոչ շուտ և տասնհինգ օրից ոչ ուշ) կնքում է աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

17. Հաստատության գործադիր տնօրենի պաշտոնը զբաղեցնող անձը չի կարող՝

ա/ կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.

բ/ անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ.

գ/ լինել երրորդ անձանց ներկայացուցիչը տարածքային կառավարման, կրթության պետական կառավարման լիազորված մարմիններում, համայնքում և իր կողմից կառավարվող հաստատությունում.

դ/ ծառայողական պարտականությունների կատարման

համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումարներ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

18. Մրցույթի արդյունքները կարող են վերանայվել սույն կարգի և (կամ) Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման հիմքով՝ մրցույթի մասնակցի, տարածքային կառավարման մարմնի գրավոր բողոքների հիման վրա (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում).

ա/ դատական կարգով,

բ/ ՀՀ ԿԳ նախարարության հանձնաժողովի եզրակացության հիման վրա՝ տարածքային կառավարման մարմնի կողմից:

19. Սույն կարգի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրության խախտման հիմքով մրցույթի մասնակցի, տարածքային կառավարման մարմնի գրավոր բողոքների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի ներկայացուցչի բացասական եզրակացության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով ստեղծվում է հանձնաժողով (հանձնաժողովում ընդգրկվում են՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների մասնագետները), որը իր ուսումնասիրության արդյունքների մասին գրավոր եզրակացություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին:

20. Եթե մրցույթում գործադիր տնօրեն չի ընտրվում, մեկից ավելի ձայն հավաքած հավակնորդի (կամ հավակնորդ-

ների) մասնակցությամբ նույն օրվա ընթացքում անցկացվում է կրկնակի քվեարկություն: Կրկնական քվեարկությամբ ևս տնօրեն չընտրվելու դեպքում, սույն կարգի համաձայն, հայտարարվում է նոր մրցույթ:

21. Խորհրդի արձակումը, կազմի փոփոխումը կամ լիազորությունների ավարտվելը չի կարող հիմք հանդիսանալ գործադիր տնօրենի հետ կնքված աշխատանքային պայմանագրի լուծման կամ փոփոխման համար:

22. Տարածքային կառավարման մարմնի ներկայացուցիչը և գործադիր տնօրենի պաշտոնակատարը մրցույթին կարող են մասնակցել որպես դիտորդ:

23.Կրթամշակութային գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են մասնակցել մրցույթին և լուսաբանել այն:

24.Գործադիր տնօրենի լիազորությունները դադարեցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

Հավելված 3

ՀՀ ԿԳ նախարարի 2006 թվականի
դեկտեմբերի 8-ի N 981-Ա/Ք հրամանի

ԿԱՐԳ

«Հայաստանի Հանրապետության պետական
հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական
ոչ առևտրային կազմակերպության խորհրդի ընտրության

1. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարները (Հայաստանի Հանրապետության մարզպետը, Երևանի քաղաքապետը, թաղապետը (համայնքապետը) և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը, հաստատության նոր խորհուրդ ստեղծելու վերաբերյալ որոշում ընդունելուց հետո (30 օրվա ընթացքում) սույն կարգի համաձայն կազմակերպում և ապահովում են խորհրդի անդամների ընտրության գործընթացը:

2. Խորհուրդը կազմված է 7 անդամից, որոնց առաջադրում են.

2-1. հաստատության մանկավարժական խորհուրդը (մինչև 40 ուսուցիչների դեպքում մանկավարժական կոլեկտիվը),որը գաղտնի քվեարկությամբ տվյալ հաստատությունում առնվազն 3 տարվա աշխատանքային ստաժ ունեցող ուսուցիչներից ընտրում է խորհրդի 2 անդամներին: Նրանց լիազորությունները դադարեցվում են աշխատանքից ազատվելու, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և հաստա-

տության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում:

2-2 Հաստատության ծնողական խորհուրդը, որը գաղտնի քվեարկությամբ որոշում է հաստատության խորհրդի 2 անդամներին: Ծնողական խորհրդի կողմից առաջադրված թեկնածուները պետք է ունենան տվյալ հանրակրթական ուսումնական հաստատությունում սովորող երեխա:

2-3. Մանկավարժական և ծնողական խորհուրդների նիստերի մասնակից յուրաքանչյուր քվեարկող կարող է քվեարկել միայն առաջադրված թեկնածուներից մեկի օգտին:

3. Տարածքային կառավարման մարմինը առաջադրում է խորհրդի 3 անդամ:

3-1 Տարածքային կառավարման մարմնի 3 անդամների առաջադրումը կատարվում է հետևյալ սկզբունքով.

ա/ Հայաստանի Հանրապետության մարզերում 2 անդամ առաջադրում են մարզպետները.

բ/ 1անդամ համայնքի ղեկավարը՝ ավագանու համաձայնությամբ: Այդ անդամի առաջադրումը նույնպես վերապահվում է մարզպետին, եթե համայնքի ղեկավարը նշված լիազորությունը 7-օրյա ժամկետում չի իրականացնում:

գ/ Երևան քաղաքում 1 անդամ առաջադրում է Երևանի քաղաքապետը.

դ/ 2 անդամ՝ թաղային համայնքի ղեկավարը՝ ավագանու համաձայնությամբ:

Այդ անդամի առաջադրումը նույնպես վերապահվում է Երևանի քաղաքապետին, եթե թաղային համայնքի ղեկավարը նշված լիազորությունը 7-օրյա ժամկետում չի իրականացնում:

զ/ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայության հաստատութ-

յունների խորհուրդներում նախարարը առաջադրում է 3 անդամ:

4. Կրթահամալիրի խորհրդի կազմը ձևավորվում է համաձայն իր Կանոնադրության:

5. Հաստատության խորհրդում առաջադրված թեկնածուների համար միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն ունենալը պարտադիր է:

6. Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հաստատության կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև տվյալ հաստատությունում այլևս սովորող երեխա չունենալու դեպքերում:

7. Հաստատության տնօրենը չի կարող լինել տվյալ հաստատության խորհրդի կազմում:

7-1. Նույն անձը չի կարող ընդգրկվել մեկից ավելի խորհուրդների կազմում:

8. Տարածքային կառավարման մարմինը (ըստ ենթակայության՝ մարզպետը, Երևանի քաղաքապետը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարը), հիմք ընդունելով հաստատության մանկավարժական, ծնողական խորհուրդների որոշումները և համայնքի ղեկավարի առաջարկությունը, 7 օրվա ընթացքում հաստատում է խորհրդի անվանական կազմը, կամ սույն կարգի խախտմամբ առաջադրված լինելու դեպքում մերժում է անվանական կազմում առաջարկված անձի կամ անձանց թեկնածությունը:

9. Խորհրդի լիազորության ժամկետը սահմանվում է հաստատության կանոնադրությամբ:

10. Խորհրդի առաջին նիստը վարում է տարիքով ավագը:

10-1 Խորհուրդը գաղտնի քվեարկությամբ ընտրում է խորհրդի նախագահ:

10-2 Ընտրության չկայանալու դեպքում տասնօրյա ժամկետում անցկացվում է կրկնակի քվեարկություն:

Ընտրությունը նորից չկայանալու դեպքում խորհրդի անդամներից մեկը՝ վիճակահանությամբ նշանակվում է նախագահ:

11. Խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման դեպքում նրան առաջադրող մարմինը 20-օրյա ժամկետում տարածքային կառավարման մարմնի հաստատմանն է ներկայացնում նոր թեկնածու՝ համաձայն սույն կարգի:

12. Խորհրդի անդամի լիազորությունները չեն կարող դադարեցվել, եթե հայտարարվել է գործադիր տնօրենի ընտրության մրցույթ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

Հավելված 4

ՀՀ …….…… մարզի ……
N…… դպրոցի խորհրդի նախագահ
……...
գործադիր տնօրենի պաշտոնի հավակնորդ
.....

Դիմում

Ծանոթացել եմ ՀՀ «Պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի գործադիր մարմնի (տնօրենի) մրցույթի, ընտրության և նշանակման կարգին (այսուհետև՝ Կարգ):

Խնդրում եմ ընդունել պահանջվող փաստաթղթերը և թույլատրել մասնակցելու ուսումնական հաստատության տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին:

Տեղեկացնում եմ, որ Կարգի 3-րդ կետով սահմանված գործադիր տնօրենի պաշտոնում նշանակումը արգելակող պայմանները իմ վրա չեն տարածվում:

Տիրապետում եմ համակարգչի (նշել համակարգչային ծրագրերը և տիրապետման մակարդակը) և օտար լեզվի (նշել օտար լեզվի անվանումը և տիրապետման մակարդակը):

Իմ կողմից նշված տեղեկությունները կեղծ լինելու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կրում եմ պատասխանատվություն:

Դիմող՝

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ֆորմատ 60x84 1/32, թուղթ՝ օֆսեթ, տպաքանակ՝ 3000
Ք. Երևան, Ղ. Փարպեցի 26/26 (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63